ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
21.05.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՕՐՐԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		ՕՐՐԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 ՀՎՀՀ-ն		02552842
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Առաջին Եկմալյան 6
1.4 Պետական գրանցման համարը		211.171.00931
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2000-06-15
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)10576673 +37491720985
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.orran.org
1.8 Էլեկտրոնային փոստը		natatum@yandex.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
Արմենուհի	Հովհաննիսյան	նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են ըստ հնարավորության՝ նպաստել երեխաների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության աճի կանխմանը, օգնել սոցիալապես անապահով մեծահասակներին և երեխաներին,		
ազմակերպել վերոհիշյալ երեխաների առօրյան այնպես, որ երեխաները համապատասխան մասնագետների հետ զբաղված լինելով տարբեր խաղերով, ուսումնական և կրթական ծրագրերով, ավելի քիչ ժամանակ ունենան փողոցում անցկացնելու համար,		
լուծել կազմակերպության կենտրոն հաճախող երեխաների և մեծահասակների սննդի հարցը կենտրոնում եղած ժամանակ,		
նպաստել պատանիների մեծահասակների ծանոթացմանը ուսուցմանը համամարդկային արժեքներին, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին, զենդերային կրթությանը, իրենց ազատություններին ու պարտականություններին,		
կարևորել համապատասխան քարոզչական աշխատանքով երեխաների համար սերը դեպի հայրենիքը, աշխատանքը, ընտանիքը, շրջապատը,		
զբաղվել երեխաների և նրանց ընտանիքի անդամների բարոյահոգերանական դաստիարակությամբ, անհրաժեշտ միջոցառումներով կանխել սոցիալական զործոնների պատճառով երեխաների մոտ առաջացող հոգեբանական բարդությունները,		
համապատասխան մասնագետների միջոցով հոգ տանել կազմակերտության մեջ ընդգրկված երեխաների,և մեծահասակների առողջության, առօրյա հիգիենայի համար,		
երեխաներին և մեծահասակներին անվճար տրամադրել ատամնաբուժական, հոգեբանական, ակնաբուժական և օրենքով չարգելվող այլ բժշկական ծառայություններ		
հնարավորության դեպքում երեխաներին և մեծահասակներին ապահովել հագուստով և այլ անհրաժեշտ իրերով,		
փորձել ծնողների հետ պարբերական հանդիպումների ժամանակ հարթել սոցիալական պատճառներով երեխա-ընտանիք հարաբերություններում առաջացող խնդիրներն ու հնարավոր լարվածությունը,		
ուսումնասիրել երեխայի և նրա ընտանիքի անդամների վարքագծում նկատվող բացասական երևույթներն ու միտճումները, փորձել գտնել դրանց լուծումները:		
2.Կազմակերպությունը իր կանոնադրական նպատակներն ու խնդիրներն արդյունավետ իրականացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով կարող է.		
համագործակցել ինչպես Հայաստանի հանրապետության պետական և ոչ պետական մարմինների, կազմակերպությունների և անհատների հետ,		
կազմակերպել գիտաժողովներ, սեմինարներ, դասախոսություններ, կլոր սեղաններ, մրցույթներ, փառատոններ, հանդիպումներ, ցուցահանդեսներ և այլ միջոցառումներ,		
հիմնել լրատվական միջոցներ:		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		9
4.2 Կամավորների թիվը		8

Digitally signed by TUMANOVA

5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը	1

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը
1	Օրրան-օգնություն կարիքավոր ընտանիքներին	Հայաստան, 0002 Երեվան, Կենտրոն, Առաջին Եկմալյան փ., 6 շ.	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծերերին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը,աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին միայնակ ու կարիքավոր ծերերին	Ընթացքի մեջ
2	Օրրան-Վանաձոր օգնություն կարիքավոր ընտանիքներին	Հայաստան, Լոռի մարզ,ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա, 4/1 շ.	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին,նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը,աջակցել աղքատ ընտանիքների	Ընթացքի մեջ
3	Հմուտ երիտասարները հանուն համայքի զարգացման	Հայաստան, Արագածոտն մարզ, ք.Աշտարակ; Արարատ մարզ, քՎեդի;Արմավիր մարզ, քԷջմիադզին;Գեղարքունիք մարզ, ք.Սևան;Կոտայք մարզ,ք.Աբովյան;Լոռի մարզ,ք.Վանաձոր; Շիրակ մարզ,ք.Գյումրի,գ,Ամասիա;Սյունիք մարզ,ք Կապան; Տավուշ մարզ,ք.Դիլիջան;Վայոց ձոր մարզ,գ.Խաչիկ	Վարձել արհեստավորներ և արհեստ սովորեցնել մարզերի երիտասարդներին	Ընթացքի մեջ

7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1					

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	177,418,500
8.2 Գույքը	
Ընդամենը	0

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1		
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	0	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	171,029,800
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		171,029,800

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		0

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1			
Ընդամենը		0	

Նշումներ

2024 թվականի ֆինանսական աուդիտն իրականացվելու է 2025 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____3_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրենների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության (Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

Grant Thornton

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան

Տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի պատասխանատու

9 հոկտեմբերի 2024թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 23.05.2025 18:40